



# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԻՐԻ ԱՄԱՅՆՔ

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 9

03 ՕԳՈՍՏՈՍԻ 2023 թվական

### ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 19 անդամներ:

Բացակա էին՝ Արման Աբրահամյանը, Աշոտ Ազիզյանը, Վաղարշակ Ամիրխանյանը, Անահիտ Առաքելյանը, Լենդրուշ Արշակյանը, Անահիտ Հակոբյանը, Քրիստինե Մանուկյանը, Արթուր Մուրադյանը:

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝ վարչական ղեկավարներ Անդրանիկ Մեջլումյանը, Վարդան Հակոբյանը, Արտակ Թովմասյանը, Բաղդասար Թովմասյանը, աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ Սիրանուշ Նիկողոսյանը, բնապահպանության, գյուղատնտեսության և հողաշինության բաժնի պետ Բենիամին Թադևոսյանը, բաժնի գլխավոր մասնագետ Արազ Հակոբյանը, քաղաքաշինության բաժնի պետ Բաբկեն Բեգլարյանը:

Նիստը վարում էր համայնքի ղեկավար Նորայր Սարգսյանը:

Նիստն արձանագրում էր աշխատակազմի քարտուղար Հասմիկ Զաքարյանը:

1. Լսեցին

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆԱԻՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 3-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

*/Զեկ. ՆՈՐԱՅՐ ՍԱՐԳՍՅԱՆ/*

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 14-րդ և 17-րդ հոդվածների՝ Նաիրի համայնքի ավագանին որոշում է.

1. Հաստատել Նաիրի համայնքի ավագանու 2023 թվականի օգոստոսի 3-ի արտահերթ նիստի օրակարգը.

1) Նաիրի համայնքի ավագանու 2023 թվականի փետրվարի 14-ի N 25-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:

- 2) Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը հրապարակային սակարկությամբ օտարելու և օտարման մեկնարկային գներ սահմանելու մասին:
- 3) Հողամասի նպատակային նշանակության փոփոխությանը համաձայնություն տալու մասին:
- 4) Հողամասի նպատակային նշանակության փոփոխությանը համաձայնություն տալու մասին:
- 5) Հողամասի նպատակային նշանակության փոփոխությանը համաձայնություն տալու մասին:
- 6) Հողամասի նպատակային նշանակության փոփոխությանը համաձայնություն տալու մասին:
- 7) Հողամասի նպատակային նշանակության փոփոխությանը համաձայնություն տալու մասին:
- 8) Հողամասի նպատակային նշանակության փոփոխությանը համաձայնություն տալու մասին:
- 9) Հողամասի նպատակային նշանակության փոփոխությանը համաձայնություն տալու մասին:
- 10) Հողամասի նպատակային նշանակության փոփոխությանը համաձայնություն տալու մասին:
- 11) Հողամասի նպատակային նշանակության փոփոխությանը համաձայնություն տալու մասին:
- 12) Հողամասի նպատակային նշանակության փոփոխությանը համաձայնություն տալու մասին:
- 13) Հողամասի նպատակային նշանակության փոփոխությանը համաձայնություն տալու մասին:

Կողմ-17 Դեմ-0 Ձեռնպահ-0

Չի քվեարկել – 2՝ Վարդան Ասատրյանը, Պետրոս Ստեփանյանը

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 163-Ա/

## 2. Լսեցին

### **ՆԱԻՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 14-Ի N 25-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

*/Ձեկ. ՆՈՐԱՅՐ ՍԱՐԳՍՅԱՆ/*

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 77-րդ հոդվածի 3-րդ մասի և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածի 1-ին կետի՝ Նաիրի համայնքի ավագանին որոշում է.

Նաիրի համայնքի ավագանու 2023 թվականի փետրվարի 14-ի «Նաիրի համայնքի սեփականություն հանդիսացող 2022 թվականի ամենամյա գույքագրման փաստաթղթերը և 100 % մաշված, հետագա օգտագործման ոչ պիտանի և դուրս գրման ենթակա գույքի ցանկը հաստատելու մասին» N 25-Ա որոշման N 1 հավելվածում կատարել փոփոխություն և ավելացնել Նաիրի համայնքի 2023 թվականի բյուջեի «Հանրային ծառայություն» ծրագրի 5122 հոդվածով 67.120 հազար, 193.050 հազար, 1640.0 հազար, 1152.0 հազար, 920.1225 հազար և 2508.0 հազար դրամների ձեռքբերված գույքը՝ համաձայն հավելված 1-ի:

Կողմ-18

Դեմ-0 Ձեռնպահ-0

Չի քվեարկել- 1՝ Վարդան Ասատրյանը

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 164-Ա/